Հաշվետվություն

2019 թվականի հունիսի 4-8 Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա)՝ «Համալիր անվտանգություն-2019» անվտանգության ապահովման միջոցների միջազգային 12-րդ ցուցահանդեսին և Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության նիստին մասնակցություն

1. **Անունը, ազգանունը.**

Արկադի Բալյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, 2019թ. հունիս 4-8

4. **Հրավիրող կողմը.**

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարարություն:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն Ռուսաստանի Դաշնության (Մոսկվա) «Համալիր անվտանգություն-2019» անվտանգության ապահովման միջոցների միջազգային 12-րդ ցուցահանդեսին և Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության նիստին:

6. **Քննարկված թեմաները.**

Ցուցահանդեսի շրջանակներում քննարկվեցին.

- Արտակարգ իրավիճակների կանխարգելման ազգային կենտրոնների մասին,
- մասնագետների և բնակչության պատրաստման նոր մեթոդներ ՝թվային տնտեսությունների զարգացման պայմաններում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման բնագավառում Բանգլադեշի փորձի մասին,
- տեխնածին ատակարգ իրավիճակների բնագավառում ռիսկերի կողմնորոշման տեխնոլոգիաների կիրառման մասին,

ՌՀՄԱԿ վարչության նիստում քննարկվեց.

- ՌՀՄԱԿ հայկական կողմի անձնակազմի կարգավիճակի համապատասխանեցումը «Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն ստեղծելու մասին» Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների 2015 թ. մայիսի 15-ի համաձայնագրի պահանջներին:

7. Հանդիպումները.

• քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության արտաքին կապերի տնօրեն՝ Սալտանատ Տաշմատովայի հետ,

• հրշեջ-փրկարարների միջազգային սպորտային ֆեդերացիայի գլխավոր կոմիտեյի տնօրեն՝ Անդրեյ Կալինինի հետ,

• Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի թվային էկոնոմիկայի ազգային կենտրոնի կադրերի վարչության պետ՝ Միխայիլ Շախրամանյանի հետ:

8. Հանդիպումների կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

• Հանձնարարել ՀՀ ԱԻՆ իրավաբանական վարչությանը՝ պատրաստել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ ՌՀՄԱԿ հայկական կողմի Փրկարար ծառայության ծառայողների (13 հոգի) և տեխնիկական կազմի (10 հոգի) հաստիքների հաշվին պաշտոնի նշանակված անձնակազմին քաղաքացիական անձանցով փոխարինելու վերաբերյալ, որոնց հետ Կենտրոնը կարող է կնքել աշխատանքային պայմանագրեր և որոնք կարող են Կենտրոնում պաշտոնի նշանակվել համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված հաստիքացանկի և համապատասխան ֆինանսավորման:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել նախատեսված և գործող բոլոր ծրագրերը: Վերահաստատվել է սերտ համագործակցության պատրաստակամությունը:

10. Գործուղվողը.

Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ՝ Արկադի Բալյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

10.05.2019